

գամայն օգնականն ու խորհրդականն է Գեր. Մէկինէս Եպիսկոպոսին:

Իսկ Rev. Harold Joslyn Buxton, M. A., չըջանաւարտ է Քէյմպրիճի համալսարանէն և տարիէ մը ի վեր հովիւն է Նիկոսիոյ (Կիպրոս) անկլիքան հասարակութեան, հիմայ Աւագ Սարկաւագը կ'ըլլայ Կիպրոս Կղզիին: Հայր Պրքսթըն Անգլիոյ մէջ վարած է այլ և այլ հոգևոր պաշտօններ և առին մըն ալ եղած է Ռանկունի (Պուրմա) եկեղեցիին մատրանագետը: Մեծ պատերազմէն յառաջ և ետքը քանիցս այցելեց Կովկաս. Լօրտ Մէյլըր Ֆրենտի որբախնամ գործին մէջ Հայաստան շատ գործօն գեր մը կատարեց, աշխատեցաւ Մանկանց Պաշտպան Ֆրենտին մէջ, և հիմայ ալ կ'անդամակցի Սիւրբիոյ մէջ Հայոց Տեղաւորման Յանձնաժողովին, և Աւագ Սարկաւագ ըլլալէ երկու օր ետքը ուղղակի Հալէպ գնաց՝ յիշեալ Յանձնաժողովին գործակցելու համար:

Հայր Պրքսթըն քանի մը գիրքեր գրած է Պալքաններու և Կովկասի վրայ: Հայ Ժողովուրդին բարեկամն է և կ'աշխատի հայերէն սորվելու. մասնաւոր դասեր առաւ հանգուցեալ Թէոդիկէն, երբ Քօրֆու էր Հ. Պրքսթըն. և անգամ մը անկլիքան եկեղեցականներու ուխտաւորութեան հետ, երբ ներկայացաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, լատին տառերով գրուած հայերէն ուղերձ մը կարգաց: Հայր Պրքսթըն երկու հայ որբեր հովանաւորած է իր ծախքով և զանոնք զրած է Լոնտոնի մօտ Քէլհամի աստուածաբանական դպրոցը, որոնց մին, Պր. Պերճ, այս տարի չըջանաւարտ եղաւ մեծ յաջողութեամբ, և քանի մը օրէն երուսաղէմ հասած կ'ըլլայ արդէն, մէկ կողմէն ուսուցչութիւն ընելու ժառանգաւորաց Վարժարանին մէջ և միւս կողմէն հայերէն սորվելու և Հայոց Եկեղեցւոյ վերաբերեալ նիւթեր ուսումնասիրելու նպատակով:

(Սիւն, 1928 Դեկտեմբեր, էջ 384):

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Յարգանքով Աւետիս Թագաւորի ապահով վերադարձի բարեբասիկ առիթով հեռեւեալ հեռագիրը զրկուեցաւ պալատ, Նոյեմբեր 10ին, Գեր. Տ. Սուրէն Եպս.ի կողմէ:

«Ձերդ Վեհափառութեան հրաշալի եւ ապանով վերադարձի բարեբասիկ առիթ, մենք, մեր կողմէ եւ յանուն համայն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի հայ համայնքին, կուգանք արտայայտել մեր անսահման ուրախութիւնը, եւ կը ներկայացնենք մեր խորին նուիրման եւ հաւատարմութեան զգացումը Ձերդ Վեհափառութեան եւ Հաշիմական Գահին, եւ կ'աղօթենք Ամենակալ Աստուծոյ պահել Ձեր Վեհափառութիւնը վսանցներէ եւ առնել իր աստուծային պաշտպանութեան ներքեւ եւ շնորհել Ձեր Վեհափառութեան երկար եւ բարգաւաճ իշխանութիւն վասն մեծի վառաց Հաշիմական Թագաւորութեան»:

Իսկ Վ.Ե. Թագաւորի Ծննդեան ճարտարձի եղանակի առիթով հեռեւեալ հեռագիրը զրկուեցաւ արտայայտական պալատ, Գեր. Տ. Սուրէն Եպս.ի կողմէ:

«Ձեր Վեհափառութեան Ծննդեան եղանակի առիթով, մենք յարգանքով եւ հաւատարմութեամբ կը ներկայացնենք մեր կողմէ եւ յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի Հայ համայնքին մեր ամենեւնեւ անկեղծ շնորհաւորութիւնները եւ կ'աղօթենք Ամենակալ Աստուծոյ շնորհել Ձեր Վեհափառութեան երկար կեանք որպէսզի մնա մեր լոյսը, փառքը եւ պաշտպանը մինչեւ վերջ»:

ՊԱՇՏՈՆՆԵՐՈՒ ՓՈՓՈԽՈՒՄ

Դեկտեմբեր ամսու ընթացքին, պատգմներու հետեւեալ փոփոխութիւններ կատարուեցան Ս. Արքունէն ներս՝ Պատ. Տնօրէն Ժողովի որոշումով: —

Հօգ. Տ. Մեսրոպ Վրդ. Տեխոյեանի տեղ Ս. Գարուբեան Տանգի Տեսուչ նշանակուեցաւ Ժառ. Վարժարանի Փոխ-Տեսուչ Հօգ. Տ. Լեւոն Արք. Աբէլեանը:

Հօգ. Տ. Լեւոն Արքայի տեղ, Տպարանի Տեսուչ Հօգ. Տ. Ներսիս Վրդ. Բապունեանը կանչուեցաւ Ժառ. Վարժարանի Փոխ-Տեսուչեան պատասխանատու պատգմներ:

Իսկ Տպարանի Տեսուչին յանձնուեցաւ Հօգ. Տ. Դաիթ Արք. Սահակեանի՝ որ միաժամանակ կը վարէ նաեւ Կիւլթեկեան Մասնագործանի Տեսուչին:

Հօգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի տեղ, Ս. Արք. Նոյս Տնտեսագէտ նշանակուեցաւ Հօգ. Տ. Անուշաւան Վրդ. Չղջանեանը, որ նոյն առիթով պիտի կատարէ նաեւ Հիւրընկալի պատգմ:

Սիւն կը մտադրէ պատգմընկալ Հոգեւոր Հայրերուն կարողութիւն եւ արդիւնաւորութիւն իրենց նոր պատգմներուն մէջ:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

● Շր. 1 Նոյ. — Ս. Չորից Աւետարանչաց տունին առթիւ, ըստ սովորութեան, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի գաւթին մէջ զտնուող Ս. Յովն. Աւետարանչի մատարան մէջ:

● Կիր. 2 Նոյ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Քարոզեց Գեր. Տ. Նորայր Եպս. Նիւթ ունենալով երէկուան տօնը — Չորս Աւետարանիչները — և ծանրացաւ Աւետարաններուն թիւադրած խորհուրդին ու սկզբունքներուն շուրջ:

● Բչ. 3 Նոյ. — Ս. Բալսէլի Ասուածամօր տունին առթիւ, Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Աստուածածին, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Ըստ սովորութեան, պատարագիչն էր Տաճարին Տեսուչը՝ Լոգ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

● Շր. 8 Նոյ. — Վաղուան Գիւտ Խաչի տունին առթիւ, կէսօրէ վերջ, Գեր. Տ. Նորայր Եպիսկ. Պողոսեանի զխաւարութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատեսակը՝ Գիւտ Խաչի աշրին կից՝ հայապատկան Ս. Իրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբաօղի-կաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Լոգ. Տ. Հայկասեր Վրդ.:

● Կիր. 9 Նոյ. — Գիւտ Խաչ: Դիւերային և առաստեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Լուսաւորիչ: Ս. Պատարագէն ետք, նախագահութեամբ Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեանի, կատարուեցաւ եռադարձ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Դերեզմանին և Ս. Պատանատեղւոյն շուրջ, երգելով «Նշանաւ ամենայաղթ» շարականեր: Ս. Դերեզմանի աստեանին մէջ երգուեցան «Տէր ողորմեա» և «Խաչի քո Քրիստոս», որմէ ետք թափօրը վեր-ջացաւ Ս. Իրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

● Դչ. 11 Նոյ. — Ն. Վ. Հիւսէյն Թաղաւորի ապանով արքունիք վերադարձին առթիւ, Կ. ա. ժամը 10ին, Ս. Յակոբեանց Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Դոնարանական Մաղթանք՝ նախա-գահութեամբ Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեանի՝ որ քարոզեց, երկար ու բարձր կեանքի մաղ-թանքներ ընելով մեր կործովի ու երիտասարդ Թաղաւորին:

— Նոյնը կրկնուեցաւ նաև կէսօրէ վերջ, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատարան մէջ:

● Կիր. 16 Նոյ. — Հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ: Պատարագիչ Գեր. Տ. Սուրեն Եպս. Քէմհանեան և կատարեց քանանայական ձեռնադրու-թիւնը Տիր. Թուանդ Աստուրեանի, վերակիչ-ւով զայն Տ. Խոսրով Բնյ. (Օծումէն ետք, Գեր. Սրբապետը քարոզեց, քնարան ունենալով «Շօփ Տեառն ի վերայ իմ, վասն որոյ և էօծ իսկ զիս» (Դու. Գ. Դ. 18), անդրադառնալով քանանայա-կան աստիճանի սրբութեան ու յորդարական խօս-քեր ընելով իր ձեռնասուն նորընծայ Տէր Հօր:

● Շր. 22 Նոյ. — Ս. Հրեշտակապետաց տունին առթիւ, երէկուան նախատեսակը և այս առա-ւօտեան ժամերգութիւնն ու Ս. Պատարագը պաշ-տուեցան ի Ս. Հրեշտակապետ Ըստ սովորութեան Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհան-

գրատեան պաշտօն՝ Ս. Աթոռոյս բարերար Աղանի ձէվահիրճեանի և պարագայից հոգիներուն հա-մար, որմէ ետք Միաբանութիւնը պատուասիր-ուեցաւ վանուց Տեսչարանին մէջ՝ Տեսուչ Լոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուէլեանի կողմէ:

● Կիր. 23 Նոյ. — Ս. Պատարագը մատուց-ուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ:

● Կիր. 30 Նոյ. — Ս. Պատարագը մատուց-ուեցաւ ի Ս. Յակոբ: Քարոզեց Լոգ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուէլեան, քաջատրիւով պատճառը ամէն անատի մէջ գոյութիւնն ունեցող զժողովրդեան վիճակին, ու եղբակցուց թէ Աստուծոյ հետ մեր ունեցած բարւոք ու մշտական յարաբերու-թեան, ու անկէ առաջացած շնորհքին միջոցաւ իմայն մարդ կրնայ գտնել իր հոգիին խաղաղու-թիւնը ու ցոյց ըլլալ իր վիճակէն:

● Դչ. 3 Դեկտ. — Ընծայման հանդիսաւոր նախատեսակը պաշտուեցաւ ի Ս. Յակոբ, նախա-գահութեամբ Գեր. Տ. Շնորհք Եպս.:

● Եչ. 4 Դեկտ. — Ընծայման Ս. Ասուածամօր: Գեր. Տ. Շնորհք Եպս. Գալուստեանի զխաւարու-թեամբ, Միաբան Հայրեր մեկնեցան Գեթեմանի ձորը, և «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աս-տուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանդիսաւորապէս պատարագեց և «Ապաքէն դուք Տաճար Աստուծոյ կնկնաւնոյ էք» քնարանով քարոզեց Գեր. Հանդիսապետ Սրբա-պետը, և Ս. Պատարագէն ետք նախագահեց Կիւ-լապի Կիւլպէնկեանի և Կիւլպէնկեան գերդաս-տանի համայն ննջեցեցող հոգիներուն համար կա-տարուած տարեկան հանգստեան պաշտամունքին:

● Կիր. 7 Դեկտ. — Ս. Պատարագը մատուց-ուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Քարոզեց Լոգ. Տ. Մաշտոց Վրդ. Բարիլուսեան, շեշտելով պահեցողութեան զերը քրիստո-նէական կենցաղի մէջ:

● Շր. 13 Դեկտ. — Ս. Առաք. Թաղեօսի եւ Բար-թողիմեօսի: Իր անդրանիկ Ս. Պատարագը մատուց-նորընծայ Արթ. Տ. Խոսրով Բնյ. Աստուրեանը՝ Ս. Դիւսաղորի մատարան մէջ:

● Կիր. 14 Դեկտ. — Ի Ս. Յակոբ, Աւագ Սե-ղանին վրայ պատարագեց նորընծայ Տ. Խոսրով Բնյ. ի ուսուցիչն ու վարժիչը՝ Լոգ. Տ. Դաւիթ Արք. Սահակեան: Քարոզեց Լոգ. Տ. Անուշաւան Վրդ. Չղջանեան, խօսելով աղօթքի անհրաժեշ-տութեան մասին քրիստոնէի կեանքին մէջ:

● Եչ. 18 Դեկտ. — Ս. Հարցն Եղիպսացւոց տո-նին առթիւ Ս. Պատարագ մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Մակարայ մատարան մէջ:

● Կիր. 21 Դեկտ. — Ս. Պատարագը մատուց-ուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատարան մէջ: Քարոզեց Լոգ. Տ. Կիրակ Վրդ. Դարիկեան, մեկնարանելով Կոնստէնդի ասեռ. առակը:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտու-եցաւ Յղութեան տօնի նախատեսակը:

● Բչ. 22 Դեկտ. — Տղութիւն Ս. Ասուածամօր: «Հրաշափառ» ի հանդիսաւոր մուտքէն ետք, Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարի Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ հանդիսի պատարագեց և առաջ պատշաճի քարոզ ըր խօսեցաւ Գեր. Տ. Նորայր Եպս. Պողոսեան:

● Շր. 27 Դեկտ. — Ս. Յակոբայ Մըքնայ հայրա-պետի տունին առթիւ, Ս. Պատարագ մատուցուե-ցաւ Մայր Տաճարի Ս. Դիւսաղորի մատարան մէջ:

● Կիր. 28 Դեկտ. — Ս. Պատարագը մատուց-ուեցաւ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

● Եշ. 30 Նոյ. — Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի Ս. Քաղաք այցելութեան բարեբաւարի առիթով, նախապէս եղած կարգադրութեան համաձայն, Ռաշիտիէ Գօլէն, Ն. Վեհափառութեան զինուորական գացին Գեր. Տ. Սուրէն Եպս., Նոյ. Տ. Վազգէն Վրդ. և Տիար Կարպիս Հինգիւան:

— Այս ուրախ առիթով, ուրիշ համայնքներու կարգին, մեր Պատրիարքարանը շինած էր գեղեցիկ յաղթական կամար մը՝ Գեթեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարի պարտիզի ճամբուն երկայնքին, որուն երկու կողմերը կեցած էր Ս. Թարգմանչաց Վարժարանի երկսեռ աշակերտութիւնը, բարի գալուստ մաղթելու Թագաւորին:

● Ուր. 31 Նոյ. — Քաղաքիս էյր-ճօրսն օգանաւային ընկերութեան ընդհանուր Տնօրէնութեան հրահրին ընդառաջելով, Ամպաստոր պանդոկին մէջ սարքուած ճաշկերոյթին ներկայ եղաւ Գեր. Տ. Սուրէն Եպս., ընկերակցութեամբ Նոյ. Տ. Վազգէն Վրդ. և Տիար Կ. Հինգիւան:

● Եր. 1 Նոյ. — Հռովմական եկեղեցւոյ Նոր Հովուապետ ընտրութեան առիթով, Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքի հրահրին ընդառաջելով, Ս. Զարութեան Տաճարի Քրիստոսի Ս. Գերեզմանին առջև կատարուած Գոհարանական աղօթքին ներկայ գտնուեցան Գեր. Տ. Սուրէն Եպս., Նոյ. Տ. Անուշաւան Վրդ. և Տիար Կարպիս Հինգիւան:

● Եշ. 6 Նոյ. — Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի Ի Բեթլեհէմ և շրջակայ գիւղերը բարեբաւարի այցելութեան առիթով, յանուն Պատրիարքարանիս, Նոյ. Տ. Տ. Հայկասեր և Կորիւն վարդապետներ գացին զինուորական: Ն. Վեհափառութիւնը Ս. Ծննդեան Տաճարի մուտքին զինուորական նաև տեղւոյն Նոյ. Տեախին և Քահանայ Հայրերուն կողմէ և պատեցաւ Սրբալոյսի բոլոր մասերը, ուր իւրաքանչիւր համայնք բացարձակութիւն տուաւ իր իրաւանց մասին:

● Բշ. 10 Նոյ. — Նորին Վեհափառութեան օգափոխութեամբ Եւրոպա մեկնումի առիթով, Ամանի պետական օդակայան օդերթի գացին Գեր. Տ. Սուրէն և Ծնորէք Սրբազաններ և Նոյ. Տ. Վազգէն Վրդ.:

— Նոյն օրսակայն, Վեհ. Թագաւորը ետ իր երկիրը վերադարձաւ, ազատելով լուրջ վտանգէ մը:

— Այս ուրախ առիթով տեղի ունեցաւ վարդապետ և լուսաւորութիւն վանքի մուտքին և ժամը 2ին՝ զանգակահարութիւն: Զոյգ վարժարանները փակ մնացին երկու օր:

● Գշ. 11 Նոյ. — Առաւօտեան ժամը 11ին, Գեր. Տ. Ծնորէք Եպս., ընկերակցութեամբ Նոյ. Տ. Տ. Հայկասեր և Կորիւն վարդապետներու, Ն. Վ. Մուհաֆըզին գնաց աչք լոյսի:

— Նոյն առթիւ, Գեր. Տ. Սուրէն Եպս., ընկերակցութեամբ Նոյ. Տ. Տ. Թորգոմ և Վազգէն վարդապետներու, Արքունի Պալատ գնաց, խնդակցութիւն յայտնելու և արձանագրելու այցելութեան մասնաւոր տոմարին մէջ:

● Ուր. 14 Նոյ. — Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի ծննդեան 24րդ. տարեդարձի բարեբաւարի առիթով, Գեր. Տ. Սուրէն և Տ. Ծնորէք Սրբազաններ, Նոյ. Տ. Վազգէն Վրդ. և Տիար Կարպիս Հինգիւան շնորհաւորութեան գացին Քաղաքիս Վեհ. Մուհաֆըզին:

— Ժամը 12ին, Գեր. Տ. Սուրէն Եպս., Նոյ. Տ. Վազգէն Վրդ. և Ամանի Հովիւ Տ. Արիս Արդ. Արքունի Պալատ գացին և արձանագրեցին իրենց անունները օրուան տօնին առթիւ բացուած մասնաւոր տոմարին մէջ:

— Նոյն առթիւ, կէսօրէ վերջ ժամը 4ին, Հարամ Շէրիֆի տնօրէնութեան կողմէ սարքուած թէյասեղանին ներկայ եղաւ Գեր. Տ. Ծնորէք Եպս., հետն ունենալով Նոյ. Տ. Հայկասեր Վրդ. և Տիար Կարպիս Հինգիւան:

— Նոյն առթիւ, գիշերուան ժամը 8ին, Ն. Վ. վարդապետին կողմէ, Զարբայի Սպայակոյտին մէջ տրուած ընթերթին ներկայ գտնուեցաւ Գեր. Տ. Սուրէն Եպս., ընկերակցութեամբ Նոյ. Տ. Վազգէն Վրդ. և Տ. Արիս Արեղայի:

— Նոյն առթիւ, Ս. Աթոռոյս զոյգ վարժարանները երկու օր փակ մնացին և երկու գիշեր տեղի ունեցաւ լուսավառութիւն և զարդարանք:

● Կիր. 16 Նոյ. — Առաւօտեան ժամը 10ին, օդային զօծով Ս. Աթոռ ժամանեց Ս. Ռիտիս Միաբան Նոյ. Տ. Իսահակ Վրդ. Ղազարեանը:

● Դշ. 19 Նոյ. — Կ. Վ. ժամը 1.30ին, Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի ծննդեան տարեդարձի առիթով, Յորդանանի Ապաշովութեան Տնօրէնութեան կողմէ, Ստիկանատան ընդհ. կեդրոնին մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցաւ Գեր. Տ. Սուրէն Եպս., ընկերակցութեամբ Նոյ. Տ. Վազգէն Վրդ. և Տ. Արիս Արեղայի:

● Եր. 22 Նոյ. — Իրիկուան ժամը 6ին, Լիբանանի անկախութեան տարեդարձի առիթով, Ամպաստոր պանդոկին մէջ, քաղաքիս Լիբանանեան Հիւպատոսի կողմէ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Գեր. Տ. Սուրէն Եպս., Նոյ. Տ. Վազգէն Վրդ. և Տիար Կ. Հինգիւան:

● Եշ. 27 Նոյ. — Կ. Վ. ժամը 1.30ին, Ամանի վաճառականական Գրասենեակի Տնօրէնութեան կողմէ, Մեռեալ ծովի պանդոկին մէջ, Ի պատիւ Ն. Վ. Հիւսէյն Թագաւորին տրուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցաւ Գեր. Տ. Սուրէն Եպս., հետն ունենալով Նոյ. Տ. Տ. Իսահակ և Վազգէն վարդապետները:

● Եշ. 11 Դեկտ. — Ս. Աթոռոյս Ամերիկայի Նոտիքակ Նոյ. Տ. Համահակ Ծ. Վրդ. Ինքոյեան քաղաքս ժամանեց վանական գործով:

Ս. ՍԵՂԱՆԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Ս. Հրեշտակապետաց վանուց Տեսչութիւնը շնորհակալութեամբ կ'արձանագրէ որ ընդ երեսուսուղէմացի Մարգարեան եղբայրներ, իրենց նուրոգ հանգուցեալ հօր՝ Կարապետ Մարգարեանի, որ անցեալի մէջ Ս. Յակոբայ նուիրեալ Միաբան-

ներէն եղած է, յիշատակը յաւերժացնելու համար, 150 Տիւար արժողութեամբ մարմարեայ գեղեցիկ խորան մը շինել տուին Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ խոստովանանքի մատրանմէջ: